ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄԵԾ ՏԷՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԵՒ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԱՆՑՈՒԴԱՐՁԸ ԼԵՌ ԿԱՄՍԱՐԻ ԵՐԿԵՐՈՒՄ

Լեռ Կամսարը ապրել է պատմական յեղաբեկումներով լի ժամանակաշրջանում, երբ աշխարհի քաղաքական քարտէզն անդադար վերաձեււում էր, փոխւում էին իշխողներն ու իշխուողները։

Ահա այս խառնակ օրերում ապրող, սուր դիտողականութիւն ունեցող զգայուն մտածողին չէր կարող չանհանգստացնել համաշխարհային անցուդարձը, մեծ տէրութիւնների վարած քաղաքականութիւնը եւ վերջիններիս ազդեցութիւնը փոքրերի վրայ։

Լեռ Կամսար մտածողի միտքն էլ զբաղուած էր հէնց այս հարցերով։ Կեանքի բոլոր շրջաններում նա աչալրջութեամբ հետեւում էր պատմական կարեւորագոյն իրադարձութիւններից մինչեւ ներպետական մանր խնդիրներին։ Նա ոչ միայն ժամանակաշրջանի տարեգիր է, այլեւ հնարամիտ վերլուծաբան, իսկական քաղաքագէտ։ Խորհրդային երկրում «բանտարկուած» այս ծերուկը, որ զրկուած էր ազատ խօսքի իրաւունքից եւ «երկաթէ վարագոյրից» այն կողմ գոյութիւն ունեցող աշխարհից լուր չունէր, այնքան խորագէտ էր եւ ամենատես, որ վերլուծում, մեկնաբանում էր անգամ այնպիսի իրավիճակներ, որոնց մասին խորհրդային մամուլը հմտօրէն լռում էր։

Այս մասին յիշում է երգիծաբանի թոռնուհին՝ Վանուհի Թովմասեանը. «Առաւօտեան ժամերին նրան միշտ տեսնում էի գրասեղանի մօտ գրելիս։ Երբ բերում էին առաւօտեան փոստը, անցնում էր լրագրերին։ Երբեմն ինձ էր կարդալ տալիս։ Վերնագրից կամ առաջին տողից արդէն հասկանում էր յօդուածի էութիւնը եւ ասում՝ անցիր առաջ։ Շատ քիչ յօդուածներ կային, որ ստիպում էր մինչեւ վերջ կարդալ։ Փաստօրէն, իր գրելու նիւթը նա հաւաքում էր ռադիոյից, մամուլից։ Այդպիսին էր դարձել նրա շփումը աշխարհի հետ»[1]։

Ազգային ճակատագրով մտահոգ Կամսարը ցոյց է տալիս, թէ ինչպէս են մեծ տէրութիւններն օգտագործում փոքրերին. «Փոքր ազգերը շատ կարեւոր գործօն են։ Անոնք կը դիւրացնեն մեծ ազգերու գործը։ Պատկերաւոր խօսելով, անոնք կլաւիշներն են դաշնամուրին, որք ինչքան շատ ըլլան, այնքան եւրոպական կոնցերտը ներդաշնակ դուրս կու գայ»[2]։

Մէկ այլ դէպքում («Փոքր ազգերու դերը համաշխարհային պատմութեան մէջ») փոքր պետութիւնները համեմատւում են տեղափոխուող ձուերի արանքին դրուող դարմանի հետ, որպէսզի ձուերն իրար չդիպչեն եւ չկոտրուեն։

Երգիծաբանը չի խնայում իր ժողովրդին. դառը ճշմարտութիւնը՝ իբրեւ բուժող հաբ, հրամցւում է ընթերցողին։ Մեծ տէրութիւններն ընդամէնը ճառում են փոքր ազգերի բարօրութեան մասին, իսկ միամիտ հայ ժողովուրդը արդէն կուլ է տուել խայծը. «.... Հիմա մեր հարցն արդէն ուրիշ է, մեր դատն ալ համազգային է դարձեր,

---

[1] **Լեռ Կամսար**, Հալոցք, Երեւան, 2013, էջ 13։

[2] **Լեռ Կամսար**, Ազգային այբբենարան, Երեւան, 1926, էջ 120։

Սեւրի դաշնագիրը ունենք....»[3],- ասում է կեչու ծառի տակ Վրաստանի հետ զրուցող Հայաստանը։

Հէնց իր ժողովրդի ճակատագրով է մտահոգ երգիծաբանը, որ անդրադառնում է աշխարհի բազմաթիւ փոքր պետութիւններին, նրանց ճակատագրի մէջ փնտրում է իր ժողովրդի գլխին կախուած վտանգները։

Համաշխարհային անցուդարձը ներկայացնելիս Լեռ Կամսարը շատ յաճախ է կիրառում անձնաւորման գեղարուեստական արտայայտչամիջոցը։ Այս ոճական հնարանքը մարդու հնագոյն մտածողութեան դրսեւորումներից է, որն առաւելապէս տարածուած է բանահիւսութեան մէջ։ Գրականութեան մէջ այն լայնօրէն կիրառւում է նաեւ երգիծական ստեղծագործութիւններում։

Այս հնարանքին դիմելով՝ Կամսարը յաճախ միախառնում է կենցաղային եւ քաղաքական երգիծանքները։ Երբ համեմատում ենք ֆելիետոնները եւ օրագրային արձակը, նկատում ենք, որ անձնաւորումն աւելի շատ կիրառւում է առաջիններում։ Սա ունի իր օբյեկտիվ պատճառները։ Նախ բնական է, որ օրագրերի համեմատութեամբ ֆելիետոններում գեղարուեստական պատկերաւորման միջոցները յատուկ նպատակադրուած կիրառութիւն ունեն, այնինչ օրագրերն ի սկզբանէ չեն գրւում ընթերցող լայն հասարակութեան համար, եւ սրանցում տեղ գտած պատկերաւորման միջոցները զուտ գրողի գեղարուեստական մտածողութեան արդիւնք են։ Եւ յետոյ, մշտապէս տպագրուելու դժուարութիւններ ունեցող գրողը, դիմելով այս ոճական հնարանքին, ընթերցողին շեղում է բուն ասելիքից՝ այն քօղարկելով կենցաղային թեթեւ յումորի շղարշով։

Հազուադէպ, բայց երբեմն կիրառւում է նաեւ հակառակ հնարանքը, երբ միջանձնային յարաբերութիւնները պատկերելիս եւ վերլուծելիս երգիծաբանը դիմում է քաղաքականութեան օգնութեանը։ Օրինակ՝ «Զինուած խաղաղութիւն» ֆելիետոնի հերոս Ալեքսանը իր տանտիրուհու կռուազանութիւնը նկարագրելիս համեմատում է. «Պետութիւններ կը ճանչնամ, որք իրենց կեանքին մէջ պատերազմ չեն տեսած, սակայն վայրկեան մըն իսկ չեն դադրած զինուելէ»[4]։

Լեռ Կամսարի ֆելիետոնների էջերում պետութիւնները նարդի են խաղում, զրուցում են իրար հետ, նեղանում, սիրահարւում, ամուսնանում ու ամուսնալուծւում։ Խօսքի, դրութեան եւ գործողութեան կոմիզմների վառ օրինակներով գրողն իր քննադատական սլաքներն ուղղում է աշխարհով մէկ։ Թեթեւ յումորը վերաճում է սատիրայի՝ արտաքուստ՝ ծիծաղելի, բայց ներքնապէս՝ ողբերգական։

20-րդ դարի սկզբին արեւմտեան քաղաքակրթութեան հումանիստական արժէքները սասանուել էին, եւ դա պայմանաւորուած էր որոշ երկրների տնտեսական մեծ թռիչքով։ Ձեւաւորուել էր անհանդուրժողականութեան մթնոլորտ, ինդուստրիալ քաղաքակրթութիւնը կրող ազգերը ձգտում էին նուաճել եւ իւրացնել Աֆրիկայի, Ասիայի եւ Ամերիկայի այն հողերը, որոնցում ապրող ազգերն ի զօրու չէին արագ զարգացման։ Աշխարհի տարածքային վերաբաժանման համար պայքարում երբեմն տեղի էին ունենում իմպերիալիստական պատերազմներ։ Հեռաւոր Արեւելքում բախւում էին ոչ միայն Ճապոնիայի եւ Ռուսաստանի, այլեւ Անգլիայի, Ֆրանսիայի եւ Գերմանիայի շահերը։

«Ի՞նչ է իմպերիալիզմը» հարցին Կամսարն այսպէս է պատասխանում. «Երբ զբոսավայրին մէջ նստարանի մը վրայ նստած ես ու խումբ մը կու գայ, «ներողութիւն»

---

[3] Նոյն տեղում, էջ 139։

[4] **Լեռ Կամսար**, Գրաբար մարդիկ, Երեւան, 1959, էջ 147։

ըսելով քեզի նստարանին ծայրը կը հրէ ու տեղդ կը նստի, ատիկա ահաւասիկ իմպերիալիզմ է»[5]։

Իմպերիալիստական հակասութեան բնորոշ օրինակ է Մարոկկոյի համար պայքարը, որը յայտնի է «Մարոկկոյի ճգնաժամ» անունով (1905-1911 թթ.)։ Կամսարի պատկերաւոր ձեւակերպմամբ՝ Մարոկկոն ոսկոր է՝ խրուած Իսպանիայի կոկորդում, եւ ահա ինչքան ժամանակ է՝ Իսպանիան, ոսկորը թաթերի մէջ առած, փորձում է ջարդել, բայց չի ստացւում։ «Մարոկկոյի ճգնաժամն» այնքան էր խորացել, որ ամէն րոպէ կարող էր վերաճել համաեւրոպական պատերազմի։ Դա անշուշտ նկատել էր նաեւ երգիծաբանը. «Այս տարօրինակ պատերազմը կը դիտեն Անգլիան ու Ֆրանսան՝ պեխերուն տակ ժպիտ մը թաքցուցած։ Ինձի կը թուի, թէ կը սպասեն, որ Սպանիան ձանձրացած ձգէ ոսկորը, ու իրենք վրայ վազեն»[6]։

Աշխարհի տէրերը միշտ ժպիտով են նստում բանակցութիւնների սեղանին, ի ցոյց են դնում իրենց կեղծ բարեպաշտութիւնը, զինաթափուելու կոչեր անում, բայց իրենք էին զինում փոքրերին եւ իրար վրայ ուղարկում։ «Երբ մեծ պետութիւն մը պատրաստ է կռուի, պզտիկ դանակ մը կը սրէ, կու տայ այդ մանր տէրութիւններէն մէկուն ձեռքը, քանի մը հայհոյանք ալ կը դնէ բերանն ու կը ղրկէ որոշուած մեծ պետութեանը «սաթաշմիշ» ըլլալու։ Մեծ պետութիւնը դուրս կ՚ելնէ ապտակելու, երբ հանդէս կու գայ պզտիկին տէրը, թէ՝ չե՞ս ամչնար, խելքդ կը դնես անոր խելքին... քո երկրի այսինչ մասն ինձի տուր։ Ու կը սկսի կռիւը»[7]։

Կամսարի մատնանշած հէնց այս սկզբունքը գործեց Առաջին համաշխարհային պատերազմի սկզբնաւորման ժամանակ։ Սերբ ազգայնականն ու Աւստրո-Յունգարիայի թագաժառանգ Ֆրանց Ֆերդինանդը ամենեւին էլ պատմութեան թատերաբեմի գլխաւոր հերոսներ չէին։ Սկսուած Համաշխարհային պատերազմը, անշուշտ, ինդուստրիալ քաղաքակրթութեան համընդհանուր ճգնաժամի արդիւնք էր։

Լեռ Կամսարին բուն պատերազմը կարծես թէ չի հետաքրքրել։ Առաջին Համաշխարհային պատերազմի բուն ընթացքի, ռազմական գործողութիւնների մասին դիտարկումներ նա գրեթէ չունի։ Կամսարին հետաքրքրել են արդիւնքները, մասնաւորապէս հայ ժողովրդի ազգային գոյութեան խնդիրը։ Նա հետեւում է աշխարհի վերաբաժանմանը։

Սան-Ստեֆանոյի, Պերլինի վեհաժողովներից արդէն հիասթափուած հայ ժողովուրդը կարծես թէ սկսել էր աւելի սթափ նայել իրականութեանը։ Արեւմտեան հատուածն արդէն բռնել էր սեփական ուժերով իր գոյութիւնը պահպանելու գործընթացը, որը, սակայն, չարդարացուեց, քանի որ խնդիրը մտածողութեան մէջ էր։ Կամսարը դառը յումորով շեշտում է մեր՝ ուրիշներից մշտապէս օգնութիւն խնդրելու պարսաւելի բնաւորութիւնը. «1914 թուին Ռուսն ըսաւ, թէ հայուն ինքնավարութիւն կու տամ։ Այս խօսքերուն վրայ վեց ժամ չանցած՝ Փեթերսպուրկ հասան հայուն խնամխօսներն, ըսելով, թէ՝ կը սիրեմ քեզի։ Սակայն երբ հայուն յայտնի եղաւ, թէ անիկա Հայաստանը կ՚ուզէ առանց հայու, ատեց զայն ու գնաց Անգլիոյ առաջ ծունկ չոքելու, իսկ երբ Անգլիան Ղարապաղն ու Լոռին իրեն չտուաւ, ատեց զայն եւ գնաց իր խոցուած սիրտն Ամերիկային բանալու։ Ամերիկան խղճաց Հայաստանին, կաթ եւ յոյս տուաւ, եւ ատով ալ կ՚ապրի ան մինչեւ օրս»[8]։

---

[5] **Լեռ Կամսար**, Վրիպած արցունքներ, Երեւան, 1934, էջ 89։

[6] **Լեռ Կամսար**, Խաղ ու խայտառակ աշխարհ, Երեւան, 2008, էջ 234։

[7] **Լեռ Կամսար**, Վրիպած արցունքներ, էջ 90։

[8] **Լեռ Կամսար**, Ազգային այբբենարան, Երեւան, 1926, էջ 86։

Մէկ այլ տեղ էլ Կամսարը այս յոյսը համեմատում է ճանճի հետ, որը նստում է զանազան քրիստոնեայ պետութիւնների «կռնակին»։

Առաջին Համաշխարհային պատերազմի արդիւնքներից Թուրքիան, որ երգիծաբանի բնորոշմամբ «Գերմանիոյ կառապանն» էր ընդամէնը, օգուտներ քաղեց, քանի որ «Գերմանիան պարտուած Ռուսաստանը բերանը ձգած, որպէս համեղ պատառ կը ծամէր, իսկ Թիւրքիան աչքերը Գերմանիոյ բերնին տնկած՝ անոր նետելիք ոսկորին կը սպասէր՝ վրան վազելու համար»[9]։

Կամսարը ճանճերի հետ է համեմատում նաեւ առհասարակ մանր պետութիւններին, որոնք եւս մեծերի «կռնակին» յոյս էին փնտռում։ Այսպիսին է Վերսալի պայմանագրին սպասող փոքր պետութիւնների պատկերաւոր նկարագրութիւնը. «Պալատին չորս դին, պատերուն տակ <u>ճանճերու պէս</u> (ընդգծումը մերն է՝ **Ռ. Ի.***) լեցուած կը բզզային աշխարհիս չորս կողմէն եկած «մանր ազգեր» - Սերպիա, Պուլկարիա, Լեհաստան, Սիւրիա, Արապիա, Պելճիքա, Ֆինլանտա, Ատրպէյճան, Վրաստան, Դաղիստան, Թիւրքեստան, Լազիստան, Աճարիստան եւ այսպէս անվերջ։ Ասոնցմէ զատ կային այնպիսի մանր ազգեր ալ, որոնց վարտիքի կոճակները եթէ չարձակես, անկարելի է, որ արտաքնոց կարողանան երթալ»[10]։*

Կամսարը չի հաւատում ոչ մի վեհաժողովի ու միջնորդութեան։ Նրա նիհիլիստական հայեացքները հնարաւորութիւն են տալիս իրականութեանն օբյեկտիվ գնահատականներ տալ։ Նա ժխտում է անգամ ՄԱԿ-ի եւ Ազգերի լիգայի գործունէութիւնը։ Օրինակ՝ Ազգերի լիգան համեմատում է «կոմպրեսի» հետ, որը դրուել է դիւանագիտական վերքի վրայ՝ այն յաւիտեանս չլուծելու համար, կամ համեմատում է ծանրութեան հետ, որ դնում են դիւանագիտական թղթերի վրայ, որ քամին չտանի։

ԽՍՀՄ-ի կազմաւորումով կրկին խախտուեց աշխարհա-քաղաքական իրադրութիւնը։ Առաջ քաշուեց Համաշխարհային Խորհրդային Հանրապետութիւնների Միութիւն ստեղծելու ծրագիրը, որն անշուշտ ուտոպիա էր։ ԽՍՀՄ-ը չընդունուեց աշխարհի կողմից։ Ստեղծուեց քաղաքական բարդ եւ խառն իրադրութիւն։

Կամսարի սրատես աչքից չէին վրիպում պետութիւնների մանեւրումները։ Իտալիայի վարած քաղաքականութեան մասին Կամսարը գրում է. «Փոքրիկ տղաս օրն ի բուն կը ճռուողէ, բայց րոպէ մը, որ ձայնը կտրեց, մայրը, գիտնալով պատճառը, քովը կը շտապէ. «Աշոտիկ, ա՞յ կ՚ընես» ըսելով։

Իտալիան, որ ժամանակ մը Մուսոլինոյ բերնով կը ճռուողէր Անգլիոյ եւ Ֆրանսիոյ հետ, սա չորս ամիս է ձայնը կտրեր է։ Անպատճառ «այ» կ՚ընէ։

Թերթերը կ՚ըսեն, թէ մութին մէջ Խորհրդային Ռուսաստանին դուռները կը փընտրէ»[11]։

Շատ դիպուկ է երգիծաբանի համեմատութիւնը։ Համաշխարհային պատերազմից յետոյ «այ ընող» պետութիւնները քիչ չէին։ «Այ ընողներից» էին նաեւ Ֆրանսիան եւ յատկապէս Անգլիան։

Առաջին Համաշխարհային պատերազմի պատճառած վիթխարի աւերածութիւնների, մարդկային կորուստների, տնտեսական ծանր վիճակի պայմաններում որոշ երկրներում՝ մասնաւորապէս Իտալիայում եւ Գերմանիայում, ծայր առաւ դժգոհութեան ալիք, որը վերածուեց ֆաշիզմի։ Եւրոպայում յայտնուած նոր ագրեսորը՝ Գեր-

---

[9] **Լեռ Կամսար**, Ազգային այբբենարան, Երեւան, 1926, էջ 13։

[10] Նոյն տեղում, էջ 100։

[11] **Լեռ Կամսար**, Մահապուրծ օրագիր, Երեւան, 2008, էջ 228։

մանիան, յայտնուեց Անգլիայի ուշադրութեան կենտրոնում. «Անգլիան ալ առերես, ձեւի համար, Ֆրանսիոյ վախէն, պառկեր է Գերմանիոյ վրայ ու կը փսփսայ ականջն ի վար. «Մի ճզմուիր, ես քո կողմն եմ»»[12]:

Այս նոյն հարցի մասին օրագրերում Կամսարն աւելի բացախօս է. «Անգլիա, որ մինչեւ օրս Գերմանիոյ գետին էր փռել ու վրան չոքեր, այսօր վեր կը հանէ, զգեստները կը թոթուէ ու հետը Լոզանի կոնֆերանսին կը տանէ: Անգլիա կ'ուզէ հաշտեցնել Գերմանիոյ Լեհաստանին հետ ու Ռուսիոյ վրայ քշել տալ»[13]:

Առհասարակ շատ են հանդիպում միեւնոյն երեւոյթի մասին օրագրերում եւ ֆելիետոններում արուած նոյնատիպ, յաճախ բառացի դիտարկումները: Նշանակում է, որ թեման եփուել, հասունացել է գրողի մօտ, անընդհատ զբաղեցրել միտքը եւ նոր եզրակացութիւնների հնարաւորութիւն ընձեռել: Կրկնութիւններին՝ որպէս Կամսարի ստեղծագործութեան հիմնական թերութեան, անդրադարձել է Վ. Սահակեանը: Սակայն, Երգիծաբանի թոռնուհի Վանուհի Թովմասեանը, նմանատիպ կրկնութիւնների առկայութիւնը մեկնաբանում է հեղինակի՝ ձեռագրերը կորցնելու մշտական վախով:

1930-ականների արիւնոտ իրականութիւնը մի պահ մոռանալ է տալիս մեծ աշխարհի անցուդարձը: Այս շրջանում գրելու իրաւունքից ու հնարաւորութիւնից զրկուած երգիծաբանն առաւելապէս հայեացքն ուղղում էր դէպի ներս, փորձում էր հասկանալ իրագործուող նոր ցեղասպանութեան պատճառները, խոյս տալ, ինչպէս խոյս էր տուել առաջին անգամ: Այս օրերին նրա առջեւ նաեւ սեփական ինքնութիւնն ու ազնուութիւնը պահելու շատ դժուարին մի խնդիր էր դրուած: Ինչպէ՞ս հաւատարիմ մնալ էութեանդ եւ միաժամանակ չյայտնուել խորհրդային այդ մեծ գազանի ատամների տակ:

Այս առումով շատ հետաքրքիր են Լեռ Կամսարի հարցաքննութիւնների արձանագրութիւնները: Նա անընդհատ խուսափողական պատասխաններ է տուել, փորձել է իրենից հեռու վանել բոլոր ծանօթներին, չի տուել անուններ կամ հերքել է նշուած անձանց հետ իր ունեցած կապերը:

Կամսարի մարդկային բարձր արժանիքների մասին է վկայում մանկութեան ընկերոջ՝ Վարազդատ Տերոյեանի հետ կապուած հետեւեալ միջադէպը. Տերոյեանը ֆիզիքական ճնշման տակ յայտարարել էր, թէ Արամ Թովմաղեանը «իսկական քաղաքական հայեացքներ չունի, նա քաղաքական պոռնիկ է», այնինչ Կամսարը, այս մասին իմանալով, ոչ մի աւելորդ բառ չի ասում Տերոյեանի մասին[14]:

Երկրորդ Համաշխարհային պատերազմից յետոյ կրկին աշխարհի վերաբաժանում տեղի ունեցաւ, եւ բնական է, որ Կամսարի հայեացքի տակ սկսում են յայտնուել պետութիւններ, որոնք առաջ պակաս կարեւոր էին:

Նախորդ գործերում, օրինակ, Չինաստանին կամ Ճապոնիային անդրադարձներն այդքան էլ շատ չէին, իսկ «Չապրած օրեր» օրագրում եւ յաջորդ գործերում առաւել յաճախ են հանդիպում այս երկրներին տրուած գնահատականները: Սա միանգամայն օրինաչափ է եւ պայմանաւորուած է այս տէրութիւնների՝ միջազգային ասպարէզում զբաղեցրած դիրքի փոփոխութեամբ:

Պատերազմի աւարտից յետոյ հակահիտլերեան կոալիցիայի մէջ մտնող դաշնակիցների ուղիները բաժանուեցին: ԽՍՀՄ-ը եւ նրա արեւմտեան դաշնակիցները ոչ

---

[12] **Լեռ Կամսար**, խաղ ու խայտառակ աշխարհ, Երեւան, 2008, էջ 228:

[13] **Լեռ Կամսար**, Մահապուած օրագիր, Երեւան, 2008, էջ 60:

[14] Տե՛ս **Լեռ Կամսար**, Բանտիս օրագիրը, Երեւան, 2010, էջ 67-110:

միայն հեռացան միմեանցից, այլեւ յայտնուեցին հակադիր ռազմա-քաղաքական ճամբարներում: Նրանք սկսեցին հետապնդել տարբեր քաղաքական նպատակներ: Հաստատուեց ուժերի նոր փոխյարաբերութիւն: Գերմանիան, Իտալիան եւ Ճապոնիան կորցրին իրենց ռազմա-քաղաքական ազդեցութիւնը, խիստ տկարացաւ Ֆրանսիան, Թուլացան նաեւ Անգլիայի դիրքերը, որոնք այդպէս էլ չվերականգնուեցին: Անվիճելի առաջատար ուժ դարձաւ ԱՄՆ-ը: Իր դիրքերը ուժեղացրեց նաեւ Խորհրդային Միութիւնը, եւ աստիճանաբար սկսեց ձեւաւորուել սոցիալիզմի համաշխարհային համակարգը:

Կամսարը սոցիալիստական պետութիւններին նմանեցնում էր թոքախտաւորի, որն իր հիւանդութեան բացիլներն է տարածում աշխարհով մէկ: Նա ճանաչում էր սոցիալիզմի դրական կողմերը եւս, բայց նաեւ շատ լաւ գիտակցում էր, որ դրա համար նախ եւ առաջ պէտք է վերափոխել իրեն՝ մարդուն:

Կոմունիստական բացիլների բոյնը, բնականաբար, Ռուսաստանն է. «Դը Գոլը թեքել է Ֆրանսիան այնպէս, որ ջուրը, աւելի ճիշդ կեղտաջուրը, այսինքն՝ կոմունիզմը, մի կողմ հաւաքուի, ապա լուացքի դոյլը լցնի այդ «ջուրը», տանի յատուկ այդ նպատակի համար շինուած այն խոշոր լիճը թափի, որ կոչւում է Ռուսաստան»[15]:

«Կոմունիզմը բորոտ դարձրեց ողջ աշխարհը»[16],- եզրակացնում է գրողը:

Պայքարը յետպատերազմեան տարիներին հիմնականում ընթանում էր ԱՄՆ-ի եւ ԽՍՀՄ-ի եւ նրանց կողմից ղեկավարուող խմբաւորումների միջեւ: Նրանք միմեանց մեղադրում էին համաշխարհային տիրապետութիւն հաստատելու ձգտման մէջ: Խորհրդային Միութիւնը մեղադրում էր ԱՄՆ-ին, որ նա ձգտում է աշխարհում հաստատել իր իմպերիալիստական տիրապետութիւնը եւ թելադրել նրան իր կամքը: Այդ հանգամանքի հետ ԽՍՀՄ-ը չէր կարող հաշտուել: Իսկ ԱՄՆ-ը գտնում էր, որ Խորհրդային Միութեան նպատակն է կոմունիստական տիրապետութեան հաստատումը ամբողջ աշխարհում:

Ասուածի լաւագոյն դրսեւորումներից է ԽՍՀՄ-ի եւ Եգիպտոսի յարաբերութիւնների պատկերը: Այս մասին Կամսարը բազմաթիւ արժէքաւոր դիտարկումներ է անում: Նա Եգիպտոսը համարում է Ռուսաստանի բնակալը արաբական աշխարհում: Ընդ որում՝ Եգիպտոսին իր ճանկը գցելու համար «....Ռուսաստանը Սուեզը Անգլիայի ու Ֆրանսիայի ձեռքից առաւ, Եգիպտոսին տուեց...», իսկ Եգիպտոսն էլ հեշտութեամբ խաղալիք դարձաւ Ռուսաստանի ձեռքին. «Սովետական կառավարութիւնը մի երկար փայտ է տուել Եգիպտոսի ձեռքը, ասում է՝ Լիբանանը խառնիր: Եգիպտոսը խառնեց, եւ հիմա այնտեղ քաղաքացիական պատերազմ է գնում, որին կամենում են միջամտել Ամերիկան, Անգլիան, Ֆրանսիան: Իսկ Ռուսաստանը, որ ծնունդ է ամենայն չարեաց, վերմակը քաշել է գլխին եւ մի ծակից դիտում է անցուդարձը»[17]:

Սկսուած «սառը պատերազմի» պայմաններում աշխարհը բաժանուել էր երկու հակադիր խմբաւորումների. «Վեց հարիւր միլիոնանոց Չինաստանը կախուել է երկու հարիւր միլիոնանոց Ռուսաստանից: Իսկ այդ նշանակում է՝ գետնին չքսուելու համար Չինաստանը երեք տակ պէտք է ծալի իր ոտքերը: Հարաւսլաւիան, ճիշդ է, ինքն իրենից է կախուած, բայց պարանը շատ է երկար, անվերջ ճոճւում է Ամերիկայի ու Ռուսաստանի միջեւ... Ճապոնիան, որ մի ժամանակ Ամերիկայի հետ չափ ընկած հաւասար ուժով լողում էր խաղաղ ովկիանոսում, հիմա չընկղմելու համար Ամերիկայից

---

[15] **Լեռ Կամսար**, Կարմիր օրեր, Երեւան, 2000, էջ 335:

[16] **Լեռ Կամսար**, Միայնակը, Երեւան, 2018, էջ 50:

[17] **Լեռ Կամսար**, Կարմիր օրեր, Երեւան, 2000, էջ 340:

է բռնել։

Չկան, չէ, անկախ պետութիւններ աշխարհիս վրայ. նրանք երկու հաւասար մասի բաժանուած՝ կէսը Ամերիկայից են կախուած, կէսը՝ Ռուսաստանից։ Միայն այն տարբերութեամբ, որ Ամերիկայից կախուած են երկաթեայ շղթաներով, իսկ Ռուսաստանից՝ կոճի թելով....»[18]։

Չնայած Ազգերի լիգայի անփառունակ վախճանին՝ համաշխարհային հանրութիւնը անհրաժեշտ էր համարում նոր միջազգային կազմակերպութեան ստեղծումը, որը պիտի զբաղուէր խաղաղութեան պահպանման եւ անվտանգութեան ապահովման խնդիրներով։ Կամսարը, սակայն, ցաւով նկատում է, որ ՄԱԿ-ի գործունէութիւնն էլ առանձնապէս չէր տարբերւում Ազգերի լիգայի գործունէութիւնից. «Միացեալ ազգերու քարտուղարը կը կարդայ դիմումները եւ կը ժպտի անմեղ երեխայի ժպիտով։ Յետոյ այս դիմումները փոռաններ շինելով, զբոսանքին բակ կ'ելլէ ու բաց կը թողայ քամու ուղղութեամբ»[19]։

Բայց ՄԱԿ-ի գործունէութիւնն այս մանկական չարաճճիութեամբ չի աւարտւում։ Երգիծաբանը բացում է նաեւ նրա մութ կողմերը։ ՄԱԿ-ը բացել է Աֆրիկայի կափարիչն ու անկախութիւն է տալիս այնտեղ ապրող ցեղերին եւ միայն նրա համար, որ ՄԱԿ-ի անդամ դառնալով՝ յօգուտ իրենց քուէարկեն։

Սառը պատերազմի նիւթական դրսեւորումներից կարելի է համարել Արեւելեան եւ Արեւմտեան Գերմանիաների գոյութիւնը։ Այս խնդիրը շատ է մտահոգել երգիծաբանին։ Նա յատկապէս սրտի մեծ ցաւ էր ապրում, որ գերմանական ազգը թուրքացաւ, իր իսկ արտայայտութեամբ՝ «ղասաբ» դարձաւ. չէ՞ որ այս երկու ազգերը քաղաքակրթական տարբեր աստիճանների վրայ են գտնւում. «Գերմանիա՛, Բեթհովենի երկիր, նրա ո՞րերորդ սիմֆոնիան էին յիշեցնում միլիոնաւոր զոհերիդ լեղաճաք կանչերը։ Աշխարհի ո՞ր պետութիւնը իրաւունք ունի քեզանից աւելի մտածող, քեզանից աւելի զգայուն լինել։ Ինչպէ՞ս յաջողեցիր այդքան արուեստագէտների ու փիլիսոփաների արանքում այդքան գազան մնալ»[20]։

Գերմանական երկու պետութիւնների ձեւաւորումից յետոյ նրանց զարգացումն ընթացաւ միանգամայն տարբեր ուղիներով։ Արեւմտեան դեմոկրատական սկզբունքների վրայ խարսխուած ԳՖՀ-ն կարողացաւ բաւականին կարճ ժամանակամիջոցում վերականգնել իր աւերուած տնտեսութիւնը։ Ի հարկէ, ԳԴՀ-ն էլ սոցիալիստական երկրների շարքում ամենազարգացածն էր, բայց այն երբեք չհասաւ ԳՖՀ-ի մակարդակին։

Բնական է, որ քաղաքական տարբեր ուղղուածութիւն ունեցող երկրների միջեւ պիտի սրուէին յարաբերութիւնները։ Եւ այն Գերմանիաները, որ երէկ մի հօրից ու մի մօրից ծնուած քոյրեր էին, բաժանուել են կապիտալիզմի եւ սոցիալիզմի պատճառով («Լեգենդար քոյրեր»)[21]։

1955 թ. ԳՖՀ-ն դարձել էր Հիւսիս-ատլանտեան դաշինքի անդամ։ Թէ՛ Եւրոպական Միութիւնում եւ թէ՛ ՆԱՏՕ-ում ԳՖՀ-ն կարեւոր դեր էր կատարում եւ ունէր մեծ ազդեցութիւն։

Ուշադիր ընթերցողն անշուշտ կը նկատի, թէ ինչ մեծ ցաւ է ապրում Լեռ Կամսարը՝ Գերմանիայի ճակատագրին ականատես լինելով։ Ներկայացնելով երկու Գեր-

---

[18] **Լեռ Կամսար**, նշուած աշխ., էջ 340։

[19] **Լեռ Կամսար**, Չապրած օրեր, Երեւան, 2016, էջ 173։

[20] **Լեռ Կամսար**, Հալոցք, Երեւան, 2013, էջ 107։

[21] Տե՛ս **Լեռ Կամսար**, Ծերուկների մանկապարտէզ, Երեւան, 2018, էջ 25։

մանիաների լարուած յարաբերութիւնները՝ նա պարսաւանքի խօսքեր է ասում Արեւելեան Գերմանիային եւ իր զարմանքն արտայայտում, թէ նման դաւաճանութիւն գերմանական ազգից չէր սպասում։ Եւ այնքա՜ն ժամանակակից են Կամսարի գնահատականները, այնքա՜ն անկեղծ է նրա արդար զայրոյթը. «Գերմանական ազգի միասնութիւնը պէտք է փրկել ոչ թէ Ռուսաստանից զէնք բերելով, այլ երկրում միայն գաղտնի քուէարկութեամբ մի ընդհանուր իշխանութիւն ստեղծելով։

Դեմոկրատական ներկայ դարում ատոմային ռումբը ազատ ընտրութիւնն է եւ ոչ թէ Ռուսաստանից բերած զէնքը։ Ռուսաստանից բերած զէնքով ինչ էլ ձեռք բերես՝ Ռուսաստանինն է, Գերմանիայի՞ն ինչ»[22]։

Վերջին տողերը կարծես ուղղուած լինեն մեր օրերին։ Առհասարակ գրողի մեծութիւնը որոշելիս անպայման պէտք է հաշուի առնել նրա տուած դասերը։ Շուրջ կէսդարեայ հեռաւորութիւնից էլ Կամսարի խոհերը մերօրեայ են, մտրակի նման խարազանում են մեզ, բայց մենք շարունակում ենք կրկնել մեր սխալները, ուր մնաց, թէ սովորէինք ուրիշների սխալներից։

Չնայած Կամսարը խիստ քննադատութեան է ենթարկում ԱՄՆ-ի վարած արտաքին քաղաքականութիւնը, բայց իր օբյեկտիվ դիրքերից չի կարող չխօսել նաեւ ներքին կեանքի առաւելութիւններից, յատկապէս երբ հակառակ բեւեռում ԽՍՀՄ-ի խայտառակ օրինակն է։

1776 թ. ընդունուած «Անկախութեան հռչակագիրը» իւրաքանչիւր ժողովրդի անկապտելի իրաւունքն է համարում ստեղծել բոլորի ինքնուրոյն կեանքը, ազատութիւնը եւ երջանկութիւնն ապահովող անկախ պետութիւն։ Ահա այս դրոյթն էլ ընկած է «Ամերիկեան երազանքի» հիմքում։ ԱՄՆ-ը աշխարհի այն բացառիկ երկրներից է, որն իր ստեղծման արշալոյսից բռնել է ժողովրդավարութեան ուղին։ Սրա մասին է վկայում այն փաստը, որ շուրջ 250 տարուայ ընթացքում Ամերիկայի սահմանադրութիւնը գրեթէ որեւէ խմբագրման չի ենթարկուել։ Բազմազգ այս պետութիւնում այլատեացութեան որեւէ դրսեւորում չկայ, եւ սրա լաւագոյն ապացոյցը աֆրիկեան ծագում ունեցող Բարաք Օբամայի նախագահ դառնալն էր։

1960-ական թուականներին Ամերիկայի ներքաղաքական կեանքի կայունութիւնն անշուշտ պայմանաւորուած էր նաեւ նրանով, որ թէ՛ Առաջին եւ թէ՛ Երկրորդ Համաշխարհային պատերազմներից նա դուրս եկաւ նուազագոյն կորուստներով։ Եւ ինչքան էլ երգիծաբանի համար ատելի են ԱՄՆ-ի մանեւրումները արտաքին քաղաքականութեան ասպարէզում, բայց ներքին քաղաքականութեան գնահատականները շատ բարձր են։

Ամերիկան ներկայացւում է որպէս բնական պետութիւն, այնինչ Ռուսաստանը մի «պրոթեզ» է։ Ամերիկան գերադասելի է նախ եւ առաջ մարդու արժեւորման տեսանկիւնից. «Անցեալ ամսի 20-ին, երբ Ամերիկայում տեղի ունեցաւ Ճոն Քենեդիի նախագահ ընտրուելու տօնակատարութիւնը, հանդիսավայր սուրացող ինքնաշարժի մէջ նստած էին ոչ միայն Քենեդին եւ նրա անմիջական նախորդ էյզենհաուերը, այլեւ Ամերիկայում ողջ մնացած բոլոր նախկին նախագահները։ Այդ նշանակում է, որ այնտեղ, անկախ պաշտօնից, բոլոր մարդիկ պիտանի են»[23]։

Կամսարը գիտակցում է, որ սոցիալիզմը ընդամէնն ուտոպիա է, եւ բնական է, որ սոցիալիստական պետութիւններն իրենց գոյութիւնը միայն ամբողջատիրութեան միջոցով պիտի փորձեն պահպանել, այնինչ կապիտալիզմը բխում է մարդու բնական

---

[22] **Լեռ Կամսար**, Հալոցք, Երեւան, 2013, էջ 53։

[23] **Լեռ Կամսար**, Միայնակը, Երեւան, 2018, էջ 54։

էութիւնից, եւ այստեղ միայն կարող է ծնուել իսկական ժողովրդավարութիւնը. «Կապիտալիզմը քարոզի պէտք չունի, մարդը ծնուելիս իր հետն է բերում այդ գաղափարը: Նորածինն աշխարհ է գալիս որպէս մասնաւոր սեփականատէր: Ունի իր սեփական ձեռներն ու սեփական ուղեղը, որով հոգում է իր սեփական բոլոր կարիքները: Ոչ մի երեխայ աշխարհ չի գալիս սեփականազուրկ եւ չի սպասում, որ աշնան բերքահաւաքին կոլխոզի վարչութիւնն իր անդամներին բաժանի մարմնի համապատասխան անդամներ՝ ապրելու համար»[24]:

20-րդ դարը մարդկութեան պատմութեան մէջ իրադարձութիւններով ամենահարուստ ժամանակաշրջանն էր: Մարդկութիւնն ստեղծեց ամենաբազմազան զէնքերը, միայն թէ կարողանայ ոչնչացնել իր նմանին: 20-րդ դարում 65 տարի ապրած գրողը դեռ միամտօրէն հաւատում է նրան. «Դարեր ամբողջ մարդիկ աշխատեցին սովորել իրար չկոտորել՝ չկարողացան: Ու մարդկութիւնը քեզ է նայում, ո՜վ քսաներորդ դար: Բռնիր այն ազգի ձեռքը, որ իր հարեւան ազգին տապալած՝ ուզում է մորթել»[25]:

Այսպիսով՝ Լեռ Կամսարը դառնում է ժամանակաշրջանի ամենասրատես ու խիզախ տարեգիրը: Նրա ստեղծագործութիւնը, յատկապէս օրագրերը, յաջողութեամբ կարող են փոխարինել պատմութեան ցանկացած դասագրքի: Գեղարուեստական արժանիքներով հարուստ նրա գործերում այնպիսի մանրամասներ են ներկայացւում եւ վերլուծւում, որոնց մասին կ'երազէին մերօրեայ բազմաթիւ քաղաքագէտներ:

Կամսարը օբյեկտիվ տարեգիր է. պատմական եւ ոչ մի իրողութիւն չի խեղաթիւրւում նրա գրչի տակ:

ՈՎՍԱՆՆԱ ԻՍՐԱՅԷԼԵԱՆ

Երեւանի պետական համալսարանի Հայ բանասիրութեան ֆակուլտետ, մագիստրոս

[24] **Լեռ Կամսար**, Հալոցք, Երեւան, 2013, էջ 42:

[25] **Լեռ Կամսար**, Ծերուկների մանկապարտէզ, Երեւան, 2018, էջ 45: